

Դ.Ա. ԱՆԴՐՈՅԱՆ

**ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ**

Հարնքարդյունաբերության սոցիալական լիցենզիայի հայեցակարգը ուղղակիորեն կողմնորոշված է ազդակիր համայնքների հետ ընկերության հարաբերություններին: Այն ենթադրում է որոշակի գործողությունների շարք ոչ միայն ընկերության, այլ նաև ազդակիր համայնքների կողմից, որոնք ուղղված են համայնքների շահերի բավարարմանը: Գործնականում հարնքարդյունաբերության սոցիալական լիցենզիայի հայեցակարգի կիրառման կարևորությունն արտահայտվում է նաև նրանով, որ դրա կիրառման պահանջը սահմանվում է մի շարք միջազգային ֆինանսական հաստատությունների կողմից հանքարդյունաբերական ընկերություններին վարկեր տրամադրելու հարցերի քննարկման ժամանակ:

Դիտարկվում են հանքարդյունաբերության սոցիալական լիցենզիայի բաղադրիչները և մակարդակները:

Առանցքային բաղեր. հանքարդյունաբերության սոցիալական լիցենզիա, իրավունակություն, հուսալիություն:

Հայկական գիտական դիսկուրսի համար սոցիալական լիցենզիայի (ՀՍԼ) հայեցակարգը դեռ նոր է: Արտասահմանյան գիտական գրականության մեջ ՀՍԼ հայեցակարգի տեսական մոդելն ունի երեք նորմատիվ բաղադրիչ՝ իրավունակություն, հուսալիություն, վստահություն, և ՀՍԼ չորս մակարդակ՝ մերժում, ընդունում, հաստատում և նախազգծի հետ հոգեբանորեն նույնականացում կամ համասեփականություն [1]:

ՀՍԼ մակարդակներն արտահայտում են ազդակիր համայնքների վերաբերմունքը ընկերության նկատմամբ, այսինքն համայնքի նկատմամբ ընկերության վարքագծի գնահատականն է:

Նորմատիվ բաղադրիչները ծառայում են իբրև ՀՍԼ մակարդակներն առանձնացնող սահմանային չափանիշներ:

Իրավունակություն – չափանիշը ձեռք է բերվում ընկերության կողմից համայնքում գործող իրավական, սոցիալական, մշակութային, բարոյական նորմերի ընկալումով և կիրառումով, ըստ էության, համայնքի «խաղի կանոններ»-ի իրացման և կիրառման միջոցով:

Ընկալողական մակարդակում իրավունակությունը կարող է սահմանվել իբրև կառավարությունների, ինստիտուտների և սոցիալական մեխանիզմների տեղին, ճիշտ և արդարացի լինելու մարդկանց համոզմունք: Ինչ վերաբերում է

ՀԱԼ-ին, ապա գոյություն ունի իրավունակության երեք կատեգորիա. Տնտեսական, սոցիալ-քաղաքական և իրավական:

Տնտեսական իրավունակությունն ակնկալում է հանքարդյունաբերությունից ազդակիր համայնքին ուղղված տնտեսական օգուտներ:

Սոցիալ-քաղաքական իրավունակությունը ենթադրում է, որ հանքարդյունաբերող ընկերությունն իր ներդրումն է ունենում ազդակիր համայնքի կենսամակարդակի բարելավմանը, հարգում է տեղացիների ապրելակերպը և գործում ազնվության ու արդարության վրա հիմնված հայեցակարգին համապատասխան:

Ե՛վ տնտեսական օգուտները, և՛ համայնքի կենսամակարդակի բարելավմանն ուղղված ներդրումները կարող են դիտվել որպես հանքարդյունահանման բացասական հետևանքների դիմաց հանքարդյունաբերող ընկերության փոխհատուցում:

Իրավունակությունը ենթադրում է, որ ընկերությունն ունի գործունեության իրականացման համար անհրաժեշտ բոլոր իրավաբանական թույլտվությունները և պահպանում է իրավական կանոնակարգերը:

ՀԱԼ ստանալու համար բավարար իրավունակության մակարդակը տարբեր է յուրաքանչյուր ազդակիր համայնքում, և հավաստի գնահատման համար անհրաժեշտ են բանիմաց զրուցավարների կողմից անցկացված հարցազրույցներից կամ այլ որակյալ հետազոտական մեթոդներից ստացված տվյալներ:

Հուսալիություն – չափանիշը հիմք է հանդիսանում վստահության համար: Երբ ընկերությունը հուսալի է, ապա նրա նկատմամբ ազդակիր համայնքի կողմից ձևավորվում է հավատ՝ սոցիալ-տնտեսական, հոգևոր և այլ պարտականությունների և խոստումների կատարման հարցերում:

Վստահություն – չափանիշը ՀԱԼ-ի մակարդակներով առաջխաղացման հիմնարար տարր է: Տարբերվում են փոխազդեցության և ինստիտուցիոնալ վստահության ձևերը:

Փոխազդեցության վստահություն լինում է այն դեպքում, երբ ընկերությունը և նրա ղեկավարությունը ազդակիր համայնքի կողմից ընկալվում են իբրև լսելու, արձագանքելու, խոստումները պահելու, տեղական համայնքի հետ երկխոսություն պահպանելու և փոխադարձ փոխգործակցություն ցուցաբերելու ունակություն ունեցող:

Ինստիտուցիոնալ վստահությունն առաջանում է, երբ կա ընկալում, որ կողմերի ինստիտուտների (օրինակ՝ տեղական համայնքը ներկայացնող կազմակերպությունների և ընկերության) միջև հարաբերությունները հիմնված են փոխադարձ շահերի նկատմամբ համակարգված հարգանքի վրա [2]:

Մակարդակներն ու սահմանային չափանիշները ձևավորում են հիերարխիա, որը կարելի է համարել ՀՍԼ-ի ձեռքբերման փուլեր: «Մերժումը» նշված հիերարխիայի ամենացածր մակարդակն է: Դա ամենավատ սցենարն է, երբ ազդակիր համայնքը դեմ է ընկերության գործունեությանը: Այդ դեպքում ընկերության գործունեությունը (նոր նախագծի իրականացումը) կարող է նույնիսկ չսկսվել:

«Ընդունումը» նվազագույն թիրախ է ցանկացած ընկերության համար, որը ցանկանում է ազդակիր համայնքի հետ դրական հարաբերություններ հաստատել: «Ընդունումը» նշանակում է, որ ընկերությունը ստացել է ՀՍԼ իր գործունեության համար: Այդ մակարդակին հնարավոր է հասնել, եթե պահպանվի իրավունակության չափանիշն իր լայն իմաստով:

«Հավանությունը» այն մակարդակն է, երբ ազդակիր համայնքը նախագիծը համարում է համայնքի համար շահավետ: Հավանություն կարող է տրվել այնպիսի ընկերության գործունեությանը, որն ապահովել է իրավունակության և հուսալիության չափանիշների կատարումը: ՀՍԼ-ի այդ մակարդակը նշանակում է, որ ընկերության համար սոցիալ-քաղաքական ռիսկ չկա:

ՀՍԼ-ի բարձրագույն մակարդակը, երբ տեղական համայնքը ընկերությունը դիտարկում է որպես լիովին վստահելի, «նախագծի հետ հոգեբանորեն նույնականացումն է», որում համայնքը դիտվում է իբրև համասեփականատեր: Այդ դեպքում ազդակիր համայնքն ընկերության հետ միասին կիսում է նախագծի հաջողության պատասխանատվությունը: Հոգեբանորեն երկու կողմերն էլ նախագիծը դիտարկում են որպես «համատեղ սեփականություն»: ՀՍԼ-ի այդ մակարդակին կարելի է հասնել, երբ համայնքը լիովին վստահում է ընկերությանը և հավատում, որ այն միշտ գործելու է՝ ի շահ համայնքի բնակչության:

Գործնականում ազդակիր համայնքներից ՀՍԼ ստանալու ձգտում ունեցող ընկերությունները կիրառում են տարբեր ռազմավարություններ, սակայն դրանք բոլորն էլ ունեն ընդհանուր հատկանիշներ: Առաջին հերթին դա ընկերության առաջնահերթությունների համակարգում ազդակիր համայնքի հետ փոխըմբռնման և փոխգործակցության բարձր մակարդակի ձեռքբերման ուղղության հրապարակային հռչակումն է:

Երկրորդ՝ ազդակիր համայնքի հետ երկխոսության հաստատմանն ու պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացումը, օրինակ՝ ընկերությունների ներկայացուցիչներից և տեղի բնակիչներից կազմված կոնտակտային խմբերի ստեղծում, որոնք ներկայացնում են ազդակիր համայնքի բոլոր շերտերի ներկայացուցիչների շահերը, քննարկելու համար հանքարդյունահանման ծրագրի իրականացման ընթացքում ծագած խնդիրները և հաշվի առնելու տեղական համայնքների շահերը:

Երրորդ՝ ընկերության տեղեկատվական ազատության և թափանցիկության բարձր մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս ազդակիր համայնքին հանքարդյունահանող ընկերության կողմից իրականացվող հրապարակումների միջոցով մշտապես ծանոթանալ վերջինիս գործունեությանը, համայնքի համար սոցիալական և տնտեսական արդյունքների, ինչպես նաև համայնքի տարածքների էկոլոգիական հետևանքներին [3]:

Հարկ է նշել, որ ՀՍԼ հայեցակարգի գործնական կիրառման համար առավել բարենպաստ են պայմաններն անգլո-սաքսոնական նախադեպային իրավունքի վրա հիմնված երկրներում: Երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, որտեղ գերակայում են քաղաքացիական իրավունքի նորմերը, տվյալ հայեցակարգի գործնականում կիրառումը դժվար է, քանի որ նման երկրներում գործունեության իրականացման լիցենզիան, իրավական նորմերով, տրամադրում են պաշտոնական մարմինները:

Այդ պատճառով շատ ընկերություններ պաշտոնական լիցենզիան կապում են հանքարդյունաբերության իրականացման միակ և բավարար իրավունքի հետ: Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ թեև ՀՍԼ-ն ոչ ֆորմալ բնույթ ունի, սակայն, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, այն հանդիսանում է կարևորագույն լրացուցիչ պայման՝ նվազագույն սոցիալ-քաղաքական և ֆինանսական ռիսկերով գործունեությունն իրականացնելու իրավունքի ձեռքբերման համար:

Նշված իրավական գործոնների հետ մեկտեղ, որոնք դժվարացնում են ՀՍԼ-ի հայեցակարգի կիրառումը մի շարք երկրներում (այդ թվում՝ Հայաստանում), կան նաև գործոններ, որոնք մեծացնում են դրանց կիրառման արդիականությունը: Այդպիսի գործոններից են մոնոքաղաքների մեծ թիվը, որոնք հիմնվել և գործում են հարքարդյունաբերական ընկերությունների գործունեության հիման վրա (օրինակ՝ Քաջարան, Ախթալա, Շամլուղ, Ագարակ, Դաստակերտ-նախկինում գործել է), հատկապես այն վայրերում, որտեղ այլընտրանքային տնտեսական գործունեություն իրականացնելը ծայրահեղ բարդ է:

Այս պայմաններում ազդակիր համայնքի կողմից ընկերությանը ՀՍԼ-ն տրամադրելու «մերժման» մակարդակում էապես մեծանում է սուր սոցիալական վեճերի հավանականությունը:

Ընդհանուր առմամբ, բիզնեսը կհաջողի, եթե ընկերությունը գործի պատասխանատու կերպով, հոգ տանի իր աշխատակիցների և շրջակա միջավայրի մասին, ինչպես նաև հանդիսանա, այսպես կոչված, «լավ կորպորատիվ քաղաքացի»: Եվ եթե, ամեն դեպքում, ծագեն խնդիրներ, ընկերությունը պետք է չհապաղի և գործի արագ, հակառակ դեպքում՝ ՀՍԼ-ն կվտանգվի:

ՀՍԼ-ն դժվար է սահմանել և չափել: Սովորաբար ընկերությունները այդ հայեցակարգին ծանոթանում են, երբ արդեն ուշ է:

Խոշոր աղետները, այնպիսիք, ինչպիսիք են նավթի արտանետումները, Brent Spar-ի խորտակման հետ կապված հանրային մտահոգությունները, Monsanto-ի ձախողումը՝ կապված գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի հետ, Nike-ի կողմից զարգացող երկրներում աշխատուժի շահագործումը և բազում այլ դեպքեր մղծավանջ դարձան այդ ընկերությունների և ոլորտների ՀՍԼ-երի համար:

Որպես հայեցակարգ և լավագույն փորձ՝ ՀՍԼ-ն շատ արագ տարածվել է համաշխարհային հանքարդյունաբերության ոլորտում [4]: Թեև հայեցակարգը լայն ճանաչում է ստացել աշխարհում, այնուամենայնիվ, այն բավականին երկ-իմաստ և դժվարընկալելի է [5]:

Լիցենզիոն համաձայնությունները պետք է այնպես կարգավորվեն, որ ընկերությունները կարողանան բանակցել՝ ունենալով սոցիալական հատուցում ապահովելու պարտավորություններ: Սոցիալական հատուցումը կարող է ընդունել տարբեր ձևեր, ներառյալ մատակարարների որոնման կայուն և էթիկ մեթոդները, համայնքի տնտեսական զարգացման ապահովման համար նվազագույն ներդրումները և նվազագույն սպառողական վճարումները:

Անկասկած, ՀՍԼ-ի հայեցակարգն օգտագործվելու է արդյունահանողների կողմից, այն իմաստով, որով ի սկզբանե ձևավորվել է: Միևնույն ժամանակ, առկա են բավարար վկայություններ, որոնք թույլ են տալիս ենթադրել, որ արդյունաբերությունն այլևս չունի սոցիալական լիցենզիայի նկատմամբ բացառիկ հսկողություն, այն դուրս է եկել հսկողությունից և պետք է պարզեցվի: Էկոլոգիական արդարության խմբերի և արդար տնտեսության վերաբերյալ ավելի լայն տեսլական ձևավորողների տեսանկյունից՝ սոցիալական լիցենզիան դառնում է պետական կարգավորման գործընթացի հզորացման միջոց և հնարավորություն է տալիս՝ վիճարկելու ռեսուրսօգտագործման ոչ նպաստավոր նախագծերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Thomson I. & Boutilier R.G.** Social license to operate / In P. Darling (Ed.) // SME Mining Engineering Handbook.- Littleton, CO: Society for Mining, Metallurgy and Exploration, 2011.-P. 1779-1796.
2. **Williams P., Walton K.** Medicine, environmental Science. - Published 1 December 2011.
3. **Prno, Jason & Scott Slocombe, D.** Exploring the origins of ‘social license to operate’ in the mining sector: Perspectives from governance and sustainability theories //Resources Policy, Elsevier. -2012. - Vol. 37(3). – P. 346-357.

4. **Browne A.L., Stehlik D. and Buckley A.** Social licenses to operate: for better not for worse; for richer not for poorer? The impacts of unplanned mining closure for “fence line” residential communities // *Local Environment*. - 2011. -16 (No. 7). - P.707-725.
5. **Joel Gehman, Lianne M. Lefsrud, Stewart Fast.** Social license to operate: Legitimacy by another name? - June 2017. – Vol. 60, issue2.- P. 293-317.

Д.А. АНДРОЯН

КОМПОНЕНТЫ И УРОВНИ СОЦИАЛЬНОЙ ЛИЦЕНЗИИ В ГОРНОДОБЫВАЮЩЕЙ ОТРАСЛИ

Концепция социальной лицензии горнодобывающей отрасли непосредственно ориентирована на отношения компании с затрагиваемыми сообществами. Она подразумевает определенный ряд действий не только компании, но и затрагиваемых сообществ, направленных на удовлетворение интересов сообщества. На практике важность применения концепции социальной лицензии горнодобывающей отрасли выражается и в том, что требование ее применения определяется рядом международных финансовых институтов при обсуждении вопроса о предоставлении кредитов горнодобывающим компаниям.

Рассматриваются компоненты и уровни социальной лицензии в горнодобывающей отрасли.

Ключевые слова: социальная лицензия в горнодобывающей отрасли, легальность, надежность.

D.A. ANDROYAN

COMPONENTS AND LEVELS OF SOCIAL LICENSE IN MINING

The concept of the social license of the mining industry is directly oriented to the relations of the company with the affected communities, it implies a certain series of actions not only by the company, but also by the affected communities, aimed at satisfying the interests of the communities. In practice, the importance of applying the concept of the social license in mining is also expressed by the fact that the requirement for its application is defined by a number of international financial institutions when discussing the issue of granting loans to mining companies.

The article examines the components and levels of a social license in mining.

Keywords: mining social license, legality, reliability.